



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

**ՈՐՈՇՈՒՄ**

« 16 » նոյեմբերի 2023թ. N<sup>o</sup> 109 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի հերթական նիստի օրակարգը.

1) Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 107-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

4) Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

5) 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը «ԱԳՐՈՂՈՒԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին

8) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների երեխաներին մանկապարտեզի վարձավճարի արտոնություն տալու մասին

9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին



- 10)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 11)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 12)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 13)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 14) Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 15)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 16)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 17) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
- 18)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 19)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 20)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 21) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով Արման Միշայի Միքայելյանին տրամադրելուն համաձայնություն տալու մասին
- 22)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 23)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 24)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
- 25)Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին
- 26)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին



27)Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

28)Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

ԿՈՂՄ ( 15 )

ԴԵՄ ( 0 )

ՁԵՌՆՊԱՀ ( 0 )

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա.ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. նոյեմբերի 16  
ք. Սպիտակ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

**ՈՐՈՇՈՒՄ**

« 16 » նոյեմբերի 2023թ. № **110 -Ն**

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ  
107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 107-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ ( 16 )

ԴԵՄ ( 0 )

ԶԵՌՆՊԱՀ ( 1 )

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ



ՎԱՃԵ ՂԱԶԱՐՅԱՆ  
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ  
ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ  
ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈՔՅԱՆ  
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ  Ա.ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. նոյեմբերի 16  
ք. Սպիտակ



Հավելված -1

Սպիտակ համայնքի ավագանու

«16» նոյեմբերի 2023թ. թիվ 110-Ն որոշման

**հազար դրամ**

Տողի NN	Բյուջեի եկամուտները	Հոդվածի NN	Ընդամենը	Վարչական	Ֆոնդային
	ԸՆԴԱՄԵՆԸ		1,702.80	1,702.80	0
1390	-Այլ եկամուտներ	7452	1,702.80	1,702.80	0

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐԻ ԱՌԱՅԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,  
ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍՈՐԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝  Վ.ԱՊՐԵՍՅԱՆ



Հավելված-2  
Սպիտակ համայնքի ավագանու  
«16» նոյեմբերի 2023թ. թիվ 110-Ն որոշման

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Ջրամատակարարում	Այլ մշակութային կազմակերպություններ	Նախադպրոցական կրթություն	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2000	x	x	x	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		1702.8	4702.8	-3000.0	-3000.0	3000.0	1702.8
2631	6	3	1	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	-3000.0		-3000.0	-3000.0		
2824	8	2	4	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	3000.0	3000.0			3000.0	
2911	9	1	1	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	1,702.8	1,702.8				1,702.8

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐԻ ՍՊՈՐՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍՈՐՏԻ ՄԱՍ ԲԱԺԻ ՊԵՏ.  Վ.ԱՊՐԵՍՅԱՆ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » նոյեմբերի 2023թ. № 111 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ  
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-ից 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԿՈՂՄ ( 15 )

ԴԵՄ ( 1 )

ՁԵՌՆՊԱՀ ( 1 )

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ

Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. նոյեմբերի 16

ք. Սպիտակ





ՄՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Սպիտակ համայնքում սահմանել տեղական տուրքեր.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամ,

մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հարյուր հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

Սույն ենթակետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում



Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-4	5,0
5-8	4,0
9-12	3,0
13-16	2,0
17-20	1,0

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամի և սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 հազար դրամի և սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ անհատական բնակելի տների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ վաթսուն հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն



կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

3) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար ՀՀ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

4) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային



կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

8) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար ՀՀ դրամ:

9) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար ՀՀ դրամ:

10) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար ՀՀ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսունհինգ հազար ՀՀ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար ՀՀ դրամ

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար ՀՀ դրամ



- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսունհինգ հազար ՀՀ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար ՀՀ դրամ

11) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար.

12) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար ՀՀ դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար ՀՀ դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ

դ. խաղատների համար՝ յոթ հարյուր հազար ՀՀ դրամ

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ հազար ՀՀ դրամ

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր քսանհինգ հազար ՀՀ դրամ

13) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսվարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար ՀՀ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր ՀՀ դրամ



- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնյոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ
  - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար ՀՀ դրամ
  - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար ՀՀ դրամ
    - բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
  - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար ՀՀ դրամ
  - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ
  - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար ՀՀ դրամ
  - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար ՀՀ դրամ
  - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ
  - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար ՀՀ դրամ
- 14) համայնքի վարչական տարածքում տնային կենդանիներ՝ շներ, կատուներ, պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար ՀՀ դրամ
- 15) ավագանու սահմանաձև կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
- ա. ավտոմոբիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրած գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար ՀՀ դրամ,
  - բ. թունդ ավտոմոբիլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,
  - գ. սոցիալական գովազդի համար՝ զրո ՀՀ դրամ,
  - դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,
  - ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ երեք հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ,
  - զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ հարյուր հիսուն ՀՀ դրամ.



16) Սպիտակ համայնքի կամ Սպիտակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար ՀՀ դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար ՀՀ դրամ.

18) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամ.

19) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն ՀՀ դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

20) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հարյուր քսան հինգ հազար ՀՀ դրամ.

21) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասնհինգ հազար ՀՀ դրամ

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում երկու հարյուր հազար ՀՀ դրամ

22) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10 (տասը) հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական



պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար ՀՀ դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա. բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար՝

- Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքային բնակավայրում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր հիսուն ՀՀ դրամ,

- Սպիտակ համայնքի գյուղական բնակավայրերում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր ՀՀ դրամ.

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար՝

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ,

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան ՀՀ դրամ,

- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ ՀՀ դրամ,

- գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի



համար՝ երեք, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ ՀՀ դրամ,

- արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ ՀՀ դրամ,

գ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ,

դ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար ՀՀ դրամ, կամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար ՀՀ դրամ,

ե. Խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար՝ երեք հազար ՀՀ դրամ.

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ սույն հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված դրույքաչափի 20%-ի չափով՝ վեց հարյուր ՀՀ դրամ.

8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց մեկ ամսվա համար՝ բնակմակերեսի յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար՝ փոխհատուցման վճար՝ տասը ՀՀ դրամ.

9) Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքային բնակավայրում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց, մեկ ամսվա համար՝ փոխհատուցման վճար մեկ երեխայի համար՝ հինգ հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից.

10) Սպիտակ համայնքի գյուղական բնակավայրերում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց, մեկ ամսվա համար՝ փոխհատուցման վճար մեկ երեխայի համար՝ չորս հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից.

11) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց, մեկ ամսվա համար՝ փոխհատուցման վճար մեկ երեխայի համար՝

ա. երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ. փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից.



բ. գեղարվեստի դպրոցի ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ. փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից.

գ. մշակույթի տան խմբակների ծառայություններից օգտվողների համար՝ երկու հազար ՀՀ դրամ. փաստացի ծախսերը մնացած մասով սուբսիդավորել Սպիտակ համայնքի բյուջեից.

12) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար փոխհատուցման վճար՝ ութ հարյուր ՀՀ դրամ:

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման համար՝ հազար ՀՀ դրամ.

բ. Կենդանիների հիվանդությունների կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ հինգ հարյուր ՀՀ դրամ.

գ. Ծննդօգնության համար՝

- թեթև միջամտություն՝ հազար ՀՀ դրամ,

- ծանր միջամտություն՝ հինգ հազար ՀՀ դրամ.

դ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումների և արյունառման կամ այլ նմուշառման համար՝ (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

- մանր կենդանի հարյուր ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի երկու հարյուր ՀՀ դրամ.

ե. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ երկու հարյուր ՀՀ դրամ.

զ. Ախտահանության համար՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ երկու հարյուր ՀՀ դրամ.

է. Միջատազերծման (դեզինսեկցիա) համար՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ հարյուր ՀՀ դրամ.

ը. Կրծողների ոչնչացման (դեռատիզացիա) համար՝ 1 քառ. մետր երկու հարյուր ՀՀ դրամ.

թ. Արհեստական սերմնավորման համար՝ հինգ հազար ՀՀ դրամ.

ժ. Կենդանու հերձման համար՝

- մանր կենդանի՝ հազար ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի՝ երեք հազար ՀՀ դրամ.

ի. Կենդանիների նախասպանդային զննման համար՝

- մանր կենդանի՝ հազար ՀՀ դրամ,

- խոշոր կենդանի՝ երկու հազար ՀՀ դրամ.

լ. Տեղեկանքի տրամադրման համար՝ հարյուր հիսուն ՀՀ դրամ:

14) Սպիտակ համայնքի բնակավայրերի ոռոգման ջրի մատակարարման համար փոխհատուցման վճար յուրաքանչյուր ժամվա համար՝ պոմպով ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ, ինքնահոս ջրամատակարարման համակարգերով ջրամատակարարվող բնակավայրերում՝ հազար ՀՀ դրամ:

15) Սպիտակ համայնքի բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համար փոխհատուցման վճար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,



օրացուցային տարվա համար՝ պոմպով ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում, հազար ՀՀ դրամ՝ ինքնահոս ջրամատակարարման համակարգերով ջրամատակարարվող բնակավայրերում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



*G. Chach*

Ա. ՖՐԱՆԳՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

**ՈՐՈՇՈՒՄ**

« 16 » նոյեմբերի 2023թ. N<sup>o</sup> 112 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ  
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 27.1-ին հոդվածով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1-4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ ( 17 )

ԴԵՄ ( 0 )

ՁԵՌՆՊԱՀ ( 0 )

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ



ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ  
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. նոյեմբերի 16  
ք. Սպիտակ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 16 » նոյեմբերի 2023թ. N<sup>o</sup> 113 -Ա

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն 1-2 հավելվածների:

ԿՈՂՄ ( 17 )

ԴԵՄ ( 0 )

ՁԵՌՆՊԱՀ ( 0 )

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ



ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ  
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. նոյեմբերի 16  
ք. Սպիտակ





ՑԱՆԿ

2023 թվականի հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը ձեռք բերված հիմնական միջոցների

Հերթական համարը	Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման, կառուցման տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Համարը		Առկայությունը		Արժեք (լրան կրամ)	Նշումներ
				գրային	փաստացի (բանդ)	հաշվապահական տվյալներով (բանդ)			
1	2	3	4	5	6	7	8	9	
1	LED սյունի լույս	2023թ	10.07.2023թ	-	278	278	2 891,998	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է Ա0412191262	
2	Սյունի լուսատու 4000 K	2023թ	11.10.2023թ	-	135	135	1 918,728	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A8819878540	
3	Աթոռ համակարգչային	2023թ	18.10.2023թ	-	2	2	69,936	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522	
4	Աթոռ մետաղյա	2023թ	18.10.2023թ	-	12	12	191,844	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522	
5	Աթոռ փափուկ	2023թ	18.10.2023թ	-	4	4	239,712	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522	



6	Աղբաման	2023թ	18.10.2023թ	-	1	1	36,768	հ/հաշիվը կցվում է A2038119522
7	Աղբարկղներ մետաղյա	2023թ	18.10.2023թ	-	23	23	367,848	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522
8	Սեղաններ	2023թ	18.10.2023թ	-	3	3	140,376	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522
9	Նստարաններ	2023թ	18.10.2023թ	-	2	2	149,976	Ձեռքբերման հ/հաշիվը կցվում է A2038119522
<b>Ընդամենը</b>					460	460	6 007,186	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



*G. Khachatryan*

Ա.ՖՐԱՆԳՅԱՆ

ՑԱՆԿ

2023 թվականի հուլիսի 6-ից նոյեմբերի 7-ը ձեռքբերված անշարժ գույքի

Հերթական համարը	Անշարժ գույքի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման, կառուցման (օրինականացում) տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Համարը	Առկայությունը		Արժեք (հազար դրամ)	Նշումներ
				գույքային	փաստացի (քանակ)	հաշվապահական տվյալներով (քանակ)		
1	2	3	4	5	6	7	8	9
1	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան 46/3 ավտոտնակ հասցե, հինքնական կառույցի օրինականացում 29,48 քմ ավտոտնակ	-	-	-	1	1	49,32	
2	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան 46/2 ավտոտնակ հասցե, հինքնական կառույցի օրինականացում 28,42 քմ ավտոտնակ	-	29.06.2023թ	-	1	1	47,547	
3	Սարամեջ բնակավայր, 1-ին փող., 16 շինություններ հասցե, հինքնական կառույցի օրինականացում՝ 96,28 քմ չորանոց, 0,7 քմ պարիսպ, 1քմ պարիսպ և 0,9 քմ պարիսպ	-	05.10.2023թ	-	1	1	90,182	
<b>Ընդամենը</b>					<b>3</b>	<b>3</b>	<b>187,049</b>	



2023 թվականի Երևանի 6-ից նոյեմբերի 7-ը դուրս գրված անշարժ գույքի

Հերթական համարը	Անշարժ գույքի անվանումը և համառոտ բնութագիրը		Սեփականաշնորհման տարեթիվը	Համարը		Առկայությ ունը	Արժեքը (հազար դրամ)	նշումներ
				գույքային	փաստացի (բանոց)			
1	2		3	4	5	6	7	8
1	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փ. 1/8 հողամաս հասցեի անշարժ գույք (հողամասի օտարում), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10072023-06-0009	0,0041 հա մակերեսով հողամաս	10.07.2023թ	-	1	1	118,388	Գույքի օտարում ուղղակի վաճառքի միջոցով Հովհաննես Համլետի Շիրոյանին, հիմք՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 06 հունիսի 2023թ թիվ 449 որոշում
2	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փ. 46/2 ավտոտնակ հասցեի անշարժ գույք (հողամասի օտարում), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29062023-06-0005	0,00284 հա մակերեսով հողամաս	29.06.2023թ	-	1	1	82,0	Գույքի օտարում գնման նախապատվության իրավունքով Լևոն Անանովի Մաթոսյանին, հիմք՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 19 հունիսի 2023թ թիվ 486 որոշում
		28,42 քմ ավտոտնակ					47,547	

3	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փ. 46/3 ավտոտնակ հասցեի անշարժ գույք (հողամասի օտարում),	0,00296 հա մակերեսով հողամաս	-	-	1	1	85,47	Գույքի օտարում գնման նախապատվության իրավունքով Լևոն Անանովի Մաթոսյանին, հիմք՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 19 հունիսի 2023թ թիվ 485 որոշում
		29,48 քմ ավտոտնակ					49,32	
4	Սարամեջ բնակավայր, 1-ին փ. 16 շինություններ հասցեի անշարժ գույք (հողամասի օտարում), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05102023-06-0014	0,01618 հա մակերեսով հողամաս	05.10.2023թ	-	1	1	14,95	Գույքի օտարում գնման նախապատվության իրավունքով Գայանե Ռոբերտի Զարգարյանին, հիմք՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 26 սեպտեմբերի 2023թ թիվ 837 որոշում
		96,28 քմ չորանոց					87,811	
		0,7 քմ պարիսպ					0,638	
		1 քմ պարիսպ					0,912	
		0,9 քմ պարիսպ					0,82	
5	ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փ. 26/3 հասցեի հողումաս, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30102023-06-0071	0,00229 հա մակերեսով հողամաս	30.10.2023թ	-	1	1	66,124	Գույքի օտարում ուղղակի վաճառքով Արկադի Մկրտչի Բոյախյանին, հիմք՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 20 հոկտեմբերի 2023թ թիվ 974 որոշում
ԸՆԴԱՄԵՆԸ					5	5	553,98	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



*Գ. Մուսաբեկյան*

Ա.ՖՐԱՆԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » նոյեմբերի 2023թ. N<sup>o</sup> 114 -Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Համաձայնություն տալ մասնակցելու 2024 թվականի հետևյալ սուբվենցիոն ծրագրերին.

1. Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում, Նոր Խաչակապ բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում, Քարածոր բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում և ընդլայնում, Լեռնանցք բնակավայրի խմելու ջրի ցանցի ընդլայնում, Գոգարան բնակավայրի խմելու ջրի ցանցի մասնակի վերանորոգում, Գեղասար բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում, Սարամեջ բնակավայրի խմելու ջրի ցանցի ընդլայնում, Սարալանջ բնակավայրի խմելու ջրի ցանցի հիմնանորոգում, Հարթազյուղ բնակավայրի խմելու ջրի ջրամբարների կառուցում, Խնկոյան բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում, Շենավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի փոխարինում, Ծաղկաբեր բնակավայրի խմելու ջրի ջրիավաք ավագանի և ջրագծերի կառուցում, Լեռնավան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնում, Ջրաշեն բնակավայրում խմելու ջրի նոր ջրագծի կառուցում:

2. Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում, Սարահարթ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Քարածոր բնակավայրի ջրամբարի կառուցում, Գոգարան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարամեջ բնակավայրի ոռոգման ջրամբարի կառուցում, Հարթազյուղ բնակավայրի ոռոգման համակարգի վերանորոգում:

3. Սպիտակ համայնքի Լեռնանցք և Արևաշող բնակավայրերի թաղամասերի գազաֆիկացում:



4. Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Կաթնաջուր բնակավայրի փողոցի սալարկում տուֆ քարով՝ ջրահեռացումով, Արևաշող բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Գեղասար բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Ծաղկաբեր բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Լեռնավան բնակավայրի փողոցի սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Զրաշեն բնակավայրում փողոցների սալարկում տուֆ քարով և ջրահեռացման համակարգով, Լուսաղբյուր բնակավայրի փողոցների սալարկում տուֆ քարով, Մեծ Պարնի բնակավայրի 2-րդ փողոցի և գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկում:

5. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի քաղաքային զբոսայգու վերանորոգում, Զրաշեն բնակավայրում համայնքային պուրակի կառուցում:

6. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրում ավտոկայանատեղի կառուցում 2-րդ փուլ:

